# ՀԱՅԱUՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

| | |
|---|---|
| *ՀԱՄԱՅՆՔ* | **Դդմաշեն** |
| *ՄԱՐԶ* | **Գեղարքունիք** |



## 1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պարսկաստանի Դիաղինից և Մակվի շրջանի Տուտմա գյուղից 60 ընտանիք և Արևմտյան Հայաստանի՝ Բայազետի շրջակա գյուղերից 17 ընտանիք եկան այստեղ: Հինավուրց բնակավայրում իրենց քարավանը կանգնեցրին նորեկները և սուրբ Աստվածածին եկեղեցին կոչեցին սուրբ Թադեոս առաքյալի անունով: Եկվորների թիվը կազմել է 468 մարդ: Նրանց մեջ էին տարբեր արհեստներով զբաղվողներ: Տանուտերը Օհան Միրզոյանն էր: Գյուղացիները իրենց հետ բերել էին 440 խոշոր, 502 մանր եղջերավոր անասուններ, 40 ձի և ավանակ: Գործի գցեցին գյուղի 2 ձիթհանները, վերանորոգվեց քանդված 26 ջրաղացներից 5-ը: Դրանցից էին Մակարի, Սաֆարի, Սեփոյի և ամենամեծը՝ Ասպատուրի ջրաղացը: Դդմաշենցիները վարձով մշակում էին արքունական հողերը: 1873 թվականի համաձայն, գյուղի 100 ծխերում ապրում էր 1236 մարդ, որից տղամարդ՝ 630, կին՝ 606:

1970-90-ական թվականներին գյուղում գործել է ձիաբուծարան, որտեղ բուծվել են անգլիական զտարյուն ցեղի ձիեր:

Գյուղն այժմ ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, համայնքապետարան, պատմական թանգարան, գրադարան, մշակույթի տուն, բուժ. ամբուլատորիա: Համայնքապետարանի շենքում գործում է վիքիակումբ, որը բացվել է «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպության հովանավորությամբ: Վիքիակումբ հաճախող ցանկացած մասնակից, ստեղծում և բարելավում է ցանկացած թեմաներով հոդվածներ և դառնում ազատ գիտելիքի և հանրագիտարանի տարածման աղբյուր:

## 2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

**Դդմաշեն**, գյուղ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում: Գյուղի երկրորդ ծնունդը թվագրվում է 1828թ.՝ Մակուի վերաբնակիչների կողմից: Հայտնի է 7-րդ դարում կառուցված Ս. Թադևոս եկեղեցիով:

Դդմաշեն համայնքը գտնվում է մարզկենտրոնից 51 կմ հեռավորության վրա, մայրաքաղաքից՝ 50 կմ, իսկ տարածաշրջանային կենտրոնից /Սևանից/՝ 12 կմ հեռավորության վրա: Համայնքի աշխարհագրական կոորդինատներն են 40°34′19″ հս․ լ. 44°48′44″ արլ. ե: Գյուղը վերաբնակեցվել է 1928թ.՝ Մակու քաղաքից գաղթականներով: Դդմաշենի տարածաշրջանում հայտնաբերվել են նոր քարե դարի բնակատեղիներ: Գյուղի հարավ-արևելյան եզրին, Հրազդան գետի ձախ ափին «Խարաբեք» կոչվող տեղանքում (որը նշանակում է «Ավերակներ») պահպանվում են հնադարյան ամրոցի մնացորդներ: Ամրոցի տարածքում կան դամբարաններ և գյուղատեղի: Գյուղի տարածքում պահպանվել են նաև հնագույն բերդի հետքեր:

Ըստ ավանդության, որտեղ վճիտ ու սառնորակ աղբյուր է եղել, սրբավայր են դարձրել: Դրանցից մեկը կոչվում է «Ծառով ձոր»: Ձորում կան մի քանի ուռենի, մի աղբյուր՝ քաղցրահամ ու վճիտ ջրով: Դդմաշենի պատմական հուշարձանների շարքում յուրահատուկ են մի քանի տասնյակ խաչքարերը՝ ամեն մեկը յուրակերպ, նրբահյուս զարդաքանդակներով:

Դդմաշենի տարածքում է գտնվում «Վոթոյ բուն» քարայրը, որը եղել է հնադարյան բնակատեղի: Դդմաշենի համայնքի հողային տարածքը զբաղեցնում է Փամբակի լեռնաշղթայի հարավային թեքության լանջերի և Հրազդան գետի առանձին հատվածները: Համայնքի վարչական տարածքը զբաղեցնում է 4345.22 հա տարածք, որն ընկած է ծ.մ. 1800-2400մ բարձրության վրա: Տարածքի ռելիեֆը բավականին խայտաբղետ է: Բնակլիմայական պայմանները բնութագրվում են լեռնատափաստանային գոտու բարեխառն կլիմայով՝ ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային տարիները, որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին:

Բնակավայրի տարածքը կազմում է 204.4 հա, որից բնակելի կառուցապատման՝ 156.3 հա: Համայնքի վարչական տարածքը հատում է M-4 միջպետական նշանակության ավտոմայրուղին, համայնքի տարածքով է անցնում Գեղարքունիքի մարզը Կոտայքի մարզին կապող H-29 հանրապետական նշանակության ավտոճանապարհը:

## 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

| | |
|---|---|
| Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ) | 400-800 |
| Օդի միջին ջերմաստիճանը հունվարին ($^{0}$C) | -15 |
| Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին ($^{0}$C) | +20 |

## 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| 1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից<br>1.1)<br>1.2)<br>1.3) | Դդմաշեն | |
| 2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը | Սևան | |
| 3. Համայնքի հեռավորությունը՝ | | |
| 3.1) մայրաքաղաքից (կմ) | 50 | |
| 3.2) մարզկենտրոնից (կմ) | 50 | |
| 3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ) | 100 | |
| 3.4) նախկին շրջկենտրոնից (կմ) | 13 | |
| 3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ) | 6 | |
| 3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ) | 5 | |
| 4.Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ) | 1800-2400 | |
| 5.Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա) | 43.4522 կմ$^{2}$ | 4345.22 հա |
| 6. Սահմանակից համայնքների անվանումները | ***Գ. Ծաղկունք,<br>գ. Զովաբեր,<br>գ. Քրառափ*** | |
| 7.Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն | ddmashen.gegharquniq@mta.gov.am | |
| 8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն | ddmashen.am | |
| 9.Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը | 094 771121 | |
| 10. Համայնքապետարանի հեռախոսահամարը | - | |
| 11. Համայնքի հեռախոսային կոդը | 0261 | |
| 12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ) | այո | |
| 13.Համայնքապետարանի փոստային դասիչը | 1508 | |
| 14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ) | այո | |
| 15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ) | | |

## 5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

| | **2018թ.** |
|---|---|
| 1. Մշտական բնակչության թվաքանակը | 2833 |
| 2. Գրանցված ծնունդների քանակը | 26 |
| 2.Մահացության դեպքերի քանակը | 27 |
| 3.Ամուսնությունների քանակը | 11 |

| | |
|---|---|
| 4. Ամուսնալուծությունների քանակը | 2 |
| 5. Տնային տնտեսությունների թիվը | 734 |
| 6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը | 59 |
| 7. Կենսաթոշակառուների քանակը | 420 |
| 8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը | 105 |

## 6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | **2018թ.** |
|---|---|
| 1. Գրադարանների քանակը | 1 |
| 2. Արվեստի դպրոցների քանակը | 0 |
| 3. Երաժշտական դպրոցների քանակը | 0 |
| 4. Նախադպրոցական հիմնարկների քանակը | 1 |
| 5. Հանրակրթականդպրոցների քանակը | 1 |
| 6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը | 0 |
| 7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններիքանակը | 0 |
| 8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը | 0 |
| 9. Մարզադպրոցների քանակը | 0 |

## 7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

| | **2018թ.** |
|---|---|
| 1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ$^2$) | 46267 |
| 2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը | 1 |
| 3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը | 515 |

## 8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | 2018թ. |
|---|---|
| 1. Հողեր, ընդամենը (հա) | 4345.22 |
| 2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա) | 3866.85 |
| 3. Բնակավայրի տարածքը (հա) | 204.93 |
| 4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը | 1487 |
| 5. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը | 2856 |
| 6. Խոզերի գլխաքանակը | 795 |
| 7. Գյուղատնտեսական տեխնիկա | |
| 7.1 տրակտորներ (քանակը) | 39 |
| 7.2 կոմբայններ (քանակը) | 2 |
| 8. Գյուղացիական տնտեսությունների թիվը | 700 |

## 9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

| | |
|---|---|
| 1.Էլեկտրական ենթակայանների քանակը | 5 |
| 2.Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ) | այո |
| 3.Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ) | ոչ |
| 4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ) | այո |
| 5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ) | 19 |
| 6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը | ոչ |
| 6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը | 7 |
| 6.2 Էքսկավատորների քանակը | 1 |
| 6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը | 8 |
| 6.4 Գրեյդերների քանակը | |
| 6.5 քանակը | |
| 6.6 Աղբատար մեքենաների քանակը | 0 |
| 6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը | 0 |
| 6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը | 0 |
| 6.9 Ավտոաշտարակների քանակը | 0 |
| 7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ) | 3 |
| 8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը | ոչ |
| 9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ) | ոչ |

## 10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

***Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)***

| | **Ընդունված բյուջե** | **Փաստացի** |
|---|---|---|
| 1.Ընդամենը եկամուտներ | 63950.0 | 64237.0 |
| 2. Հարկային եկամուտներ, ընդամենը<br>Այդ թվում՝ | 19203.2 | 19490.2 |
| 2.1 հողի հարկ | 9201.4 | 8672.4 |
| 2.2 գույքահարկ | 5894.8 | 8432.9 |
| 3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը | | |
| 3.1 դոտացիա | 44746.8 | 44746.8 |
| 3.2 սուբվենցիա | | |
| 4.Մուտքեր հողի օտարումից | | 1265.1 |

***Համայնքի վարչական բյուջերի ծախսեր (հազ. դրամ)***

| | **Ընդունված բյուջե** | **Փաստացի** |
|---|---|---|
| 1. Ընդամենը ծախսեր | 63950.0 | 54599.4 |

***Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտները (հազ. դրամ)***

| | **Ընդունված բյուջե** | **Փաստացի** |
|---|---|---|
| 1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ | 7014.2 | 1265.1 |

***Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)***

| | **Ընդունված բյուջե** | **Փաստացի** |
|---|---|---|
| 1. Ընդամենը ծախսեր | 7014.2 | 1084.5 |

## 11.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

| | |
|---|---|
| 1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ<br>որից՝<br>1.1 համայնքային ծառայողներ | 6 |
| 2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ) | 32910.0 |
| 3. Ավագանու անդամների թվաքանակը | 7 |

## 12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

| **Հիմնախնդիրը** | **Ակնկալվող լուծումը** |
|---|---|
| Մշակույթի տան շենքի հիմնանորոգում | Պետական ծրագիր |
| Սուրբ Թադևոս եկեղեցու վերանորոգում | Համայնքապետարանի միջոցներ |
| Հանդիսությունների սրահի հիմնանորոգում | Սուբվենցիա |
| Գյուղամիջյան կամուրջի վերանորոգում | Համայնքապետարանի միջոցներ |
| Հացահատիկահավաք նոր կոմբայնի ձեռքբերում | Լիզինգ |
| Ոռոգման ջրի պատվարի, արտաքին ջրատարի և ցանցի կառուցում | Պետական ծրագիր |